Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

# ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**Հիմնադրամի հոգաբարձուների**
**խորհրդի 28-06-2024 թ. որոշմամբ**
**««ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»**
**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին**

| | | |
|---|---|---|
| **1. Հիմնադրամի՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | «ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ |
| 1.2 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ 30 |
| 1.3 Պետական գրանցման համարը | | 222.160.00372 |
| 1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 1999-09-20 |
| 1.5 ՀՎՀՀ-ն | | 00009237 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)10285598 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | arabkiruccf.am |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | aruccf@arabkirmc.am |
| **2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝** | | |
| | | |
| **3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝** | | |
| | | |
| **4. Կառավարչի անուն, ազգանուն՝** | | |
| Շուշան Դավթյան | | |
| **5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը** | 6 | |
| **6. Անձեռնմխելի կապիտալի չափը** | | |
| **7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ** | | |
| **8. Ֆինանսավորման աղբյուրները՝** | | |
| 8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի | 8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը | 8.3 Չափը |
| 8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր | | |
| | | |
| 8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Արաբկիր ԲԵԴԱԻ Արնիկ Բուժմիավորման աջակցության համար | 2,500,000 |

Digitally signed by DAVTYAN SHUSHAN 6814730128
Date: 2024.08.05 12:04:17 AMT

| | | |
|---|---|---|
| | ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամ «Հայաստանի հանրապետությունում զարգացման խնդիրներ և հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող վերականգնողական ծառայությունների գնահատում և բարելավում ծրագրի» իրականացման համար | 23,632,000 |
| | ՍԵՄՌԱ Պլյուս հիմնադրամ, Շվեյցարիա -Բուժքույրական շարունակական կրթության համար | 1,880,000 |
| | Էլեոնորեն հիմնադրամ Ցյուրիխի մանկական համալսարանական հիվանդանոց /Էռնստ Լոյման/ Համագործակցության և զարգացման ծրագրերի իրականացման համար, բժշկական սարքերի ձեռք բերման համար | 27,734,293 |
| | Ամերիկայի Սթարկի հիմնադրամի և Հայաստան լսողության աջակցության ծրագիր կազմակերպության հետ իրականացվող «Համայնքահեն լսողության աջակցության ծառայություններ» ծրագիր Հայաստանում լսողության խնդիրներ ունեցող անձանց լսողական սարքերի տրամադրում, հետագա խնամքի ապահովում | 36,985,674 |
| | Հայաստանի Երեխաների Առողջության Հիմնադրամ- Բժշկական սարքավորման ձեռք բերման համար | 4,828,250 |
| | Ջի Էն Սի Ալֆա ՓԲԸ - Մեղրիում վերականգնողական կենտրոնի ստեղծման համար աջակցություն | 3,000,000 |
| | Արցախից բռնի տեղահանվածների աջակցություն | 6,907,708 |
| | Ստացված շահաբաժին | 42,001,808 |
| 8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Կավուկչյան ընտանիք և Սուսի Իվանյան-Համայնքահեն լսողության աջակցության ծառայություններ ծրագիր Հայաստանում լսողության խնդիրներ ունեցող անձանց լսողական սարքերի տրամադրում, հետագա խնամքի ապահովում | 150,700 |
| | Լուսինե Կիրակոսյան Արցախում բուժօգնություն ստացող երեխաների համար աջակցություն | 396,400 |
| | Կալոյան Գաբրովսկի - Բժշկական նյութի հրապարակման համար աջակցություն | 618,240 |
| | Արցախից բռնի տեղահանվածների աջակցություն | 3,442,150 |
| **9. Հիմնադրի ներդրումը՝** | | |
| 9.1 Դրամական միջոցներ | | |
| 9.2 Գույք | 9.2.1 Տեսակը | 9.2.2 Արժեքը |
| | | |
| **10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները** | | |

| 10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝ | 10.2 Նվիրված/նվիրաբերված գույք | |
|---|---|---|
| | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ | | |
| | | |
| 10.1.2 Իրավաբանական անձինք | | |
| | Դեղորայք | 425,398,400 |
| | Բժշկական պարագաներ | 55,206,699 |
| | Հումանիտար տնտեսական ապրանքներ | 1,486,274 |
| | Լսողական սարքեր և պիտույքներ | 13,328,832 |
| | Բժշկական սարքեր | 1,282,346 |
| | Ախտորոշիչ թեստեր | 43,704 |
| 10.1.3 Ֆիզիկական անձինք | | |
| | | |

**11. Իրականացված ծրագրերը՝**

| 11.1 Ծրագրի անվանումը | 11.2 Ծախսված գումարը |
|---|---|
| ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամ «Հայաստանի հանրապետությունում զարգացման խնդիրներ և /կամ հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող վերականգնողական ծառայությունների գնահատում և բարելավում ծրագիր» | 23,632,000 |
| Հայաստան լսողության աջակցության ծրագիր և Ամերիկայի Սթարկի Լսողության Հիմնադրամի հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում լսողական խնդիրներ ունեցող անձանց, 44օրյա պատերազմին մասնակցած զինվորներին և կամավորներին լսողական սարքերով ապահովում, հետագա խնամք և մոնիտորինգի իրականացում | 38,847,522 |
| Էլեոնորեն հիմնադրամ - Ցյուրիխի մանկական համալսարանական հիվանդանոցի հետ համատեղ համագործակցության ծրագրի շրջանակներում ուղղված Հայաստանում մանկաբուժության և բժշկագիտության ճյուղերի զարգացմանը | 28,190,414 |
| Շվեյցարիայի Սեմռա Պլյուս Հիմնադրամի նվիրաբերված գումարի շրջանակներում Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ Ապարանի ամառային ճամբարում երեխաների հանգստի կազմակերպում | 1,059,002 |
| Հայ Օգնության Ֆոնդի նվիրաբերված գումարի շրջանակներում բժշկական սարքավորումների ձեռք բերում | 7,490,711 |
| Աջակցություն Արնիկ Բուժմիավորմանը | 2,996,040 |
| Բուժքույրերի շարունակական կրթության ծրագիր | 1,880,000 |

| | |
|---|---|
| Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամի աջակցությամբ բժշկական սարքավորման ձեռք բերում | 5,044,250 |
| Բժշկական հոդվածի հրապարակում | 617,712 |
| Արցախից բռնի տեղահանված անձանց աջակցություն | 4,126,285 |
| Որպես մարդասիրական օգնություն ստացված ապրանքների, ձեռք բերված ապրանքների բաշխում Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ-ին և այլ բժշկական հաստատությունների | 493,400,059 |
| **12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը** | 629,820,942 |
| **13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը** | 607,283,995 |

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 17 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն ____________________

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ ____________________

ստորագրությունը, անունը, ազգանունը

BDO

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*«Արաբկիր» Միացյալ Մանկական Բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին*

**Կարծիք**

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արաբկիր» Միացյալ Մանկական Բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի ու զուտ ակտիվի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

**Կարծիքի հիմք**

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից՝ հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկայի պահպանման մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

**Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել նրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

BDO

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

26 հունիս, 2024թ.

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Դավիթ Եղիզարյան, FCCA
Աուդիտի գործընկեր

**«Արաբկիր» Միացյալ Մանկական Բարեգործական հիմնադրամ**
**Ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվի մասին հաշվետվություն**
**2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

| | Ծնթ. | **2023թ.** հազար դրամ | **2022թ.** հազար դրամ |
|---|---|---|---|
| Շնորհներից եկամուտ | 3 | 600,254 | 2,192,176 |
| Ծրագրային ծախսեր | 4 | (602,089) | (2,194,811) |
| Այլ գործառնական ծախսեր | | (12,134) | - |
| Վարչական ծախսեր | 5 | (16,796) | (15,801) |
| **Գործառնական պակասուրդ** | | **(30,765)** | **(18,436)** |
| Ասոցիացված կազմակերպությունում ներդրումներից եկամուտ | 6 | 84,091 | 310,226 |
| Այլ օգուտ, զուտ | | 906 | 5,335 |
| **Հավելուրդ մինչև հարկումը** | | **54,232** | **297,125** |
| Շահութահարկի գծով ծախս | | - | (784) |
| **Տարվա զուտ հավելուրդ/(պակասուրդ)** | | **54,232** | **296,341** |
| **Կուտակված հավելուրդ տարեսկզբի դրությամբ** | | 1,502,570 | 1,206,229 |
| **Կուտակված հավելուրդ տարեվերջի դրությամբ** | | **1,556,802** | **1,502,570** |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են «Արաբկիր» Միացյալ Մանկական Բարեգործական հիմնադրամի ղեկավարության կողմից 2024թ. հունիսի 26-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Շուշան Դավթյան
Տնօրեն

Նազելի Միհրյան
Գլխավոր հաշվապահ

«Արաբկիր» Միացյալ Մանկական Բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| | Ծնթ. | 31/12/2023 | 31/12/2022 |
|---|---|---|---|
| | | հազար դրամ | հազար դրամ |
| **Ակտիվներ** | | | |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Պաշարներ | 7 | 13,546 | 1,812 |
| Դեբիտորական պարտքեր, կանխավճարներ | 6 | 27,626 | 3,116 |
| Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով | | 1,880 | - |
| Կարճաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր | | 300 | - |
| Դրամական միջոցներ | 8 | 33,459 | 50,222 |
| | | **76,811** | **55,150** |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | | 192 | 45 |
| Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում | 6 | 1,760,911 | 1,718,821 |
| | | **1,761,103** | **1,718,866** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **1,837,914** | **1,774,016** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | 9 | 30,201 | 21,634 |
| Փոխառություն | 10 | 21,513 | 20,000 |
| Կրեդիտորական պարտքեր | | 1,174 | 1,588 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **52,888** | **43,222** |
| **Զուտ ակտիվներ** | | **1,785,026** | **1,730,794** |
| **Սեփական միջոցներ** | | | |
| Կուտակված հավելուրդ | | 1,556,802 | 1,502,570 |
| Հիմնադիրների ներդրում | | 228,224 | 228,224 |
| **Ընդամենը սեփական միջոցներ** | | **1,785,026** | **1,730,794** |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են «Արաբկիր» Միացյալ Մանկական Բարեգործական հիմնադրամի ղեկավարության կողմից 2024թ. հունիսի 26-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Շուշան Դավթյան
Տնօրեն

Նազելի Մհերյան
Գլխավոր հաշվապահ

**«Արաբկիր» Միացյալ Մանկական Միացյալ Բարեգործական հիմնադրամ**
**Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**
**2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ**

| | 2023թ. հազար դրամ | 2022թ. հազար դրամ |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Մուտքեր դրամաշնորհներից | 110,195 | 74,193 |
| | **110,195** | **74,193** |
| Վճարումներ գնումների դիմաց | (48,074) | (27,245) |
| Վճարումներ ծառայությունների դիմաց | (31,068) | (15,850) |
| Վճարումներ աշխատակիցներին | (38,145) | (37,137) |
| Ֆինանսական աջակցություն | - | (21) |
| Վճարումներ այլ հարկերի գծով | (13,936) | (14,666) |
| Այլ ելքեր | (5,791) | (4,881) |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(26,819)** | **(25,607)** |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Ասոցիացված կազմակերպությունից շահութաբաժնի ստացում | 10,013 | 50,000 |
| Հիմնական միջոցի վաճառքից մուտք /(ելք) | (520) | 4,786 |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **9,493** | **54,786** |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Փոխառությունների մարում/(ստացում), զուտ | 1,200 | (1,500) |
| Տոկոսային եկամտի ստացում | - | 75 |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **1,200** | **(1,425)** |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(16,126)** | **27,754** |
| Դրամական միջոցների գծով արտարժույթի փոխարժեքային տարբերություն | (637) | (4,417) |
| **Տարեսկզբի դրությամբ դրամական միջոցներ** | **50,222** | **26,885** |
| **Տարեվերջի դրությամբ դրամական միջոցներ** | **33,459** | **50,222** |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են «Արաբկիր» Միացյալ Մանկական Բարեգործական հիմնադրամի ղեկավարության կողմից 2024թ. հունիսի 26-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Շուշան Դավթյան
Տնօրեն

Նազելի Մհերյան
Գլխավոր հաշվապահ

## 1. Հիմնադրամի մասին

«Արաբկիր» Միացյալ Մանկական Բարեգործական հիմնադրամը (Հիմնադրամ) ստեղծվել է «Արաբկիր» միացյալ մանկական ֆոնդ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերակազմավորման ձևով. վերակազմակերպման արդյունքում հանդիսանում է նրա գույքի և պարտավորությունների իրավահաջորդը:

Հիմնադրամի կանոնադրությունը հաստատվել է 20.09.1999թ. ՀՀ արդարադատության նախարարի 1502 հրամանով, նոր խմբագրությամբ գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 17.08.2004թ., գրանցման թիվ՝ 222.160.00372, գրանցման վկայական՝ 03Ա.065357, ՀՎՀՀ 00009237:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Մամիկոնյանց 30:

Հիմնադրամի կառավարման մարմիններն են.
- Հոգաբարձուների խորհուրդը,
- Հիմնադրամի տնօրենը:

Տնօրենը հիմնադրամի գործադիր ղեկավարն է, որը նշանակվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից՝ 4 տարի ժամկետով:

Հիմնադրամի գործունեության նպատակներն են՝ ՀՀ բնակչության առողջության պահպանմանը, հիվանդությունների կանխարգելմանը, ախտորոշմանը, բուժմանը, բժշկական և սոցիալական վերականգնմանը ուղղված աշխատանքների իրականացումը, առողջապահական և սոցիալական նշանակություն ունեցող այլ ծրագրերի իրականացումը, ինչպես նաև այդ ծրագրերի իրականացման համար բժշկական հաստատությունների շենքերի կառուցումը և ընթացիկ վերանորոգումը, սարքավորումներով և դեղորայքով ապահովման աջակցությունը:

## 2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ներքո: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

*Չափման հիմքերը*
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

*Անընդհատության սկզբունք*
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

*Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների օգտագործում*

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար Հիմնադրամի ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

*Գործարքներ արտարժույթով*

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են ՀՀ դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալ օրվա միջին փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ.

ա) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են)՝ կիրառելով փակման (հաշվետու ամսաթվի) փոխարժեքը,

բ) արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով, ներկայացվում են գործարքի օրվա փոխարժեքով:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են արտարժույթով գործարքների մարման կամ հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով դրամային հոդվածների վերագնահատման արդյունքում, ճանաչվում են ֆինանսական արդյունքում:

*Ֆինանսական գործիքներ*

Կազմակերպությունում առկա են հետևյալ ոչ ածանցյալ ֆինանսական գործիքները.

- կրեդիտորական պարտքեր,
- դրամական միջոցներ,
- փոխառություններ,

Դրամական միջոցները կազմված են դրամարկղի և ընթացիկ հաշիվների մնացորդներից:

*Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում*
Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները:
Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից շահաբաժնի գծով եկամուտը ճանաչվում է, երբ սահմանվում է Հիմնադրամի շահաբաժին ստանալու իրավունքը:

*Պաշարներ*

Պաշարները չափվում են ինքնարժեքից և վաճառքի գնից, հանած համալրման և վաճառքի ծախսումները, նվազագույնով:
Պաշարների միավորի ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

*Շնորհներ*

Հիմնադրամը որպես շնորհ հաշվառում է հիմնադիրներից, տեղական և միջազգային կազմակերպություններից ստացված միջոցները, որոնք ճանաչվում և չափվում են իրական արժեքով: Շնորհները ճանաչվում են որպես եկամուտ սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար ստացվել են այդ շնորհները:

## 3. Շնորհներից եկամուտ

| | 2023թ.<br>հազ. դրամ | 2022թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Շնորհներից եկամուտ | 600,254 | 2,192,176 |
| | **600,254** | **2,192,176** |

## 4. Ծրագրային ծախսեր

| | 2023<br>հազ. դրամ | 2022<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Ձեռք բերված կամ որպես հումանիտար օգնություն ստացված և բաշխված դեղորայք և բժշկական պարագաներ (4.1) | 502,253 | 2,138,475 |
| Դրամային և այլ ծրագրային ծախսեր (4.2) | 99,836 | 56,336 |
| | **602,089** | **2,194,811** |

### 4.1 Դեղորայքի և բժշկական պարագաների հումանիտար օգնություն

| | 2023թ.<br>հազ. դրամ | 2022թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| «ԱՐԱԲԿԻՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ-ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՍՊԸ | 486,577 | 1,099,385 |
| ԼՈՒՍԻՆԵ ԲԱԲԱՅԱՆ (ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ) | 13,573 | 31 |
| ԷԼԵՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ | 894 | - |
| ՀՀ-ՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ (ԱՐՆԻԿ ՄԱՆԿԱԿԱՆ ԲՈՒԺՄԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ) | 788 | - |
| ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ | 379 | - |
| «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ | 42 | - |
| ԲԺՇԿԱԿԱՆ ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ | - | 873,390 |
| ԵՐ.ՔԱՂ.ՔԱՂԱՔԱՅԻՆ ԷՆԴՈԿՐԻՆ ԴԻՍՊԱՆ.ՊԵՏ. ՓԲԸ | - | 56,165 |
| ՀՀ ԱՆ ՄՕՀԿ ՊՈԱԿ | - | 37,357 |
| ՍՈՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ) | - | 15,100 |
| ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | - | 14,167 |
| «ՄԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ | - | 12,270 |
| «ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ | - | 8,712 |
| ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԲԿ | - | 8,515 |
| «ՀԵՆՐԻԿ ԻԳԻԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ | - | 7,510 |
| ԹԻՎ 9 ՄԱՆԿԱԿԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ | - | 2,417 |
| ԹԻՎ 19 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ | - | 1,395 |
| Վ.Ա ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ | - | 1,165 |
| ՎԵԴՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ | - | 896 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **502,253** | **2,138,475** |

## 4.2 Դրամային և այլ ծրագրային ծախսեր

| Ծրագրերի անվանումները, բովանդակությունը | 2023թ. հազ. դրամ | 2022թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Սթարկի Հիմնադրամի հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում լսողական խնդիրներ ունեցող անձանց լսողական սարքերով ապահովում, հետագա խնամք և մոնիտորինգի իրականացում | 38,334 | 33,689 |
| Ցյուրիխի մանկական համալսարանական հիվանդանոցի հետ համատեղ համագործակցության ծրագրի շրջանակներում՝ ուղղված Հայաստանում մանկաբուժության և բժշկագիտության ճյուղերի զարգացմանը (բժշկական սարքերի ձեռք բերում, մասնագետների վերապատրաստումներ) | 27,124 | 8,498 |
| ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ համատեղ << Հայաստանում զարգացման հապաղում և հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող բազմապրոֆիլային ծառայությունների կարողությունների հզորացում>> ծրագրի իրականացում | 23,880 | 10,265 |
| Արցախից բռնի տեղահանվածների գծով | 4,126 | - |
| Հայ-ամերիկյան բժշկական ասոցիացիայի կողմից ստացված դրամական միջոցների տրամադրում <<Արնիկ Բուժմիավորում>> ՓԲԸ | 2,823 | - |
| Բուժքույրերի և թերապիստների շարունական կրթության ծրագիր | 1,880 | - |
| Ֆինանսական աջակցություն Սեմրա Պլյուս հիմնադրամից - Հաշմանդամություն ունեցող երեխաներին Ապարանի ամառային առողջարանում կացության ապահովում | 1,050 | 1,991 |
| Այլ | 619 | 1,893 |
| **Ընդամենը** | **99,836** | **56,336** |

## 5. Վարչական ծախսեր

| | 2023թ. հազ. դրամ | 2022թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Աշխատանքի վճարման ծախսեր | 10,949 | 11,385 |
| Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր | 1,200 | 900 |
| Փոխարժեքային տարբերությունից ծախսեր | 707 | 437 |
| Մաշվածության գծով ծախս | 365 | 331 |
| Հեռահաղորդակցության ծախսեր | 223 | 254 |
| Բանկային ծախսեր | 209 | 131 |
| Ապահովագրական ծախսեր | 168 | - |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 101 | - |
| Գրասենյակային և կոմունալ ծախսեր հիմնադրամի | 85 | - |
| Այլ ծախսեր | 2,789 | 2,363 |
| | **16,796** | **15,801** |

## 6. Ասոցիացված կազմակերպությունում ներդրումներից եկամուտ

Ասոցիացված կազմակերպությունում ներդրումը բաղկացած է.

| Ասոցիացված կազմակերպություն | Գրանցման երկիրը | Մասնաբաժին | |
|---|---|---|---|
| | | 31.12.2023թ. հազար դրամ | Տոկոս |
| «Արաբկիր» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ | Հայաստանի Հանրապետություն | **1,760,911** | **43.233%** |

| | 2023թ. հազար դրամ | 2022թ. հազար դրամ |
|---|---|---|
| **Տարեսկզբի արժեք** | 1,718,821 | 1,463,595 |
| Ասոցիացված կազմակերպության կանոնադրական կապիտալում փոփոխության ազդեցություն | 42,090 | 255,226 |
| **Տարեվերջի արժեք** | **1,760,911** | **1,718,821** |

Հաշվետու տարում մասնաբաժնի փոփոխությունը արդյունք է Ասոցիացված կազմակերպության կանոնադրական կապիտալում 2022 թվականի շահաբաժնից 42,090 հազար դրամի չափով նոր ներդրումով: Ընդհանուր հայտարարված շահաբաժնից Հիմնադրամի մասնաբաժինը կազմել է 84,091 հազար ՀՀ դրամ, որի 25,001-ը ՀՀ դրամը դեռևս չի վճարվել և ներառված է պարտքեր, կանխավճարներ:

## 7. Պաշարներ

| | 2023թ. հազար դրամ | 2022թ. հազար դրամ |
|---|---|---|
| Բժշկական պարագաներ | 13,546 | 1,812 |
| | **13,546** | **1,812** |

## 8. Դրամական միջոցներ

| | 2023թ. հազ. դրամ | 2022թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Բանկային հաշիվներ (արտարժույթ) | 14,528 | 28,320 |
| Բանկային հաշիվներ (դրամ) | 18,813 | 21,782 |
| Դրամարկղ (դրամ) | 118 | 120 |
| | **33,459** | **50,222** |

## 9. Եկամուտներին վերաբերող շնորհներ

| | 2023թ. հազար դրամ | 2022թ. հազար դրամ |
|---|---|---|
| **Տարեսկզբի արժեք** | 21,634 | 384,976 |
| Ավելացումներ (ա) | 608,822 | 1,832,960 |
| Նվազեցումներ (բ) | (600,255) | (2,196,302) |
| **Տարեվերջի մնացորդ** | **30,201** | **21,634** |

**ա) Ավելացումները իրենցից ներկայացնում են՝**

| | 2023թ. հազար դրամ | 2022թ. հազար դրամ |
|---|---|---|
| Ստացված ոչ դրամային շնորհներ *(ծնթ. 9.1)* | 496,746 | 1,758,767 |
| Ստացված դրամային շնորհներ *(ծնթ. 9.2)* | 112,076 | 74,193 |
| Շնորհների վերագնահատում | - | - |
| **Ընդամենը դրամական միջոցներ** | **608,822** | **1,832,960** |

**բ) Նվազեցումները իրենցից ներկայացնում են՝**

| | 2023թ. հազար դրամ | 2022թ. հազար դրամ |
|---|---|---|
| Շնորհառուներին հատկացված հումանիտար ապրանքների արժեքը | 486,370 | 2,114,679 |
| Իրականացված ծրագրերի և դրամական ձևով տրված գումարներ | 113,885 | 77,497 |
| Վերագնահատումից տարբերություն | - | 4,126 |
| **Ընդամենը դրամական միջոցներ** | **600,255** | **2,196,302** |

## 9.1 Ստացված ոչ դրամային շնորհներն ըստ շնորհատուների

| | 2023թ. հազար դրամ | 2022թ. հազար դրամ |
|---|---|---|
| Հայաստան Արցախ հիմնադրամ | 277,736 | 25,227 |
| Հայաստան լսողության աջակցության ծրագիր | 186,286 | 14,049 |
| Սթարկի հիմնադրամ | 13,329 | 899 |
| ՍԵՄՌԱ հիմնադրամ | 10,105 | - |
| Էքշըն Մեդեոր | 6,944 | 4,881 |
| Էլեոնորեն հիմնադրամ/Ցյուրիխի մանկական հիվանդանոց | 1,049 | 16,317 |
| Ռոու հիմնադրամ, ԱՄՆ | 800 | 3,340 |
| ՀՀ ԱՆ Դեղերի և բժշկական պարագ.ապահովման ազգային կենտրոն | 483 | 1,481,695 |
| ՍԵՄՌԱ հիմնադրամ/ Միացյալ հայկ. հիմն. | 14 | - |
| Շվեյցարիայի Սեմռա Պլյուս հիմնադրամ | - | 65,137 |
| ՄԴ Դոքթորս | - | 8,257 |
| Մինչև 10 փոքրի | - | 428 |
| ՀՀ ԱՆ ՄՕՀԿ ՊՈԱԿ | - | 138,537 |
| *ԸՆԴԱՄԵՆԸ* | *496,746* | *1,758,767* |

## 9.2 Ստացված դրամային շնորհներն ըստ շնորհատուների

2023թ.

| N | Շնորհատուներ | Դրամով | Արտարժույթով | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | հազար դրամ | Հազար շվեյցարական ֆրանկ | հազար դրամ համարժեք | Հազար ԱՄՆ դոլար | հազար դրամ համարժեք | հազար դրամ |
| 1 | «ԱՐԱԲԿԻՐ» ԲՀ-ԵԴԱԻ | 2,500 | - | - | - | - | **2,500** |
| 2 | ԷԼԵՈՆՈՐԵՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՑՅՈՒՐԻԽԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ) | - | - | - | 71 | 27,736 | **27,736** |
| 3 | ԿԱԼՈՅԱՆ ԳԱԲՐՈՎՍԿԻ | - | - | - | 2 | 618 | **618** |
| 4 | ԼՈՒՍԻՆԵ ԲԵՆԻԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ | - | - | - | 1 | 396 | **396** |
| 5 | ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ԳԾՈՎ ՄՈՒՏՔԵՐ | 9,968 | - | - | 1 | 422 | **10,390** |
| 6 | ԿԱՎՈՒԿՉՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ | 110 | - | - | - | - | **110** |
| 7 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ | - | - | - | 13 | 4,828 | **4,828** |
| 8 | ՅՈՒՆԻՍԵՖ (ՄԱԿ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) | 23,632 | - | - | - | - | **23,632** |
| 9 | ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ ՓԲԸ | 3,000 | - | - | - | - | **3,000** |
| 10 | ՍԹԱՐԿԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ | - | - | - | 95 | 36,986 | **36,986** |
| 11 | ՍԵՄՌԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ[1] | 1,880 | - | - | - | - | **1,880** |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | **41,090** | - | - | **183** | **70,986** | **112,076** |

1. ՍԵՄՌԱ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ՝ բուժքույրերի և թերապիստների շարունական կրթության ծրագրի շրջանակներում, 1,880 հազ ՀՀ դրամի չափով ծախսը և շնորհից եկամուտը ճանաչված է, ինչպես նաև ձևավորված է դեբիտորական պարտք այլ եկամուտների գծով:

2022 թ.

| N | Շնորհատուներ | Դրամով | Արտարժույթով | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | հազար դրամ | Հազար շվեյցարական ֆրանկ | հազար դրամ համարժեք | Հազար ԱՄՆ դոլար | հազար դրամ համարժեք | հազար դրամ |
| 1 | ՍԹԱՐԳԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ | 17,553 | - | - | 33 | 13,166 | **30,719** |
| 2 | ԷԼԵՈՆՈՐԵՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (8ՑՈՒՐԻԽԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ) | - | - | - | 55 | 23,075 | **23,075** |
| 3 | ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴ | 4,870 | - | - | 23 | 9,038 | **13,908** |
| 4 | ՅՈՒՆԻՍԵՖ (ՄԱԿ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) | 2,690 | - | - | - | - | **2,690** |
| 5 | ԱՐԵՎ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ | - | - | - | 5 | 1,900 | **1,900** |
| 6 | ՍԵՄՌԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ | - | 3 | 1,210 | - | - | **1,210** |
| 7 | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՈՌ | 507 | - | - | - | - | **507** |
| 8 | ՔԱՍՅԱՆ ԼԻԱՆԱ | 100 | - | - | - | - | **100** |
| 9 | ՇԵ ԼԵ ՔՈՒԻՉԻՆ | 84 | - | - | - | - | **84** |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | **25,804** | **3** | **1,210** | **116** | **47,179** | **74,193** |

## 10. Փոխառություն

Փոխառությունը ստացվել է Ասոցիացված կազմակերպությունից անտոկոս (ծնթ. 11):

Ֆինանսավորման գործունեությունից ստացվող դրամական հոսքերի համադրում 2023թ.դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար.

| | Փոխառություն հազար դրամ | Ընդամենը հազար դրամ |
|---|---|---|
| **Մնացորդը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ** | 20,000 | 20,000 |
| Փոխառությունների ավելացում տարվա ընթացքում (դրամային) | 1,513 | 1,513 |
| **Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 21,513 | 21,513 |

Ֆինանսավորման գործունեությունից ստացվող դրամական հոսքերի համադրում 2022թ.դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար.

| | Փոխառություն | Ընդամենը |
|---|---|---|
| **Մնացորդը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ** | 26,500 | 26,500 |
| Փոխառությունների մարում տարվա ընթացքում (դրամային) | (1,500) | (1,500) |
| Փոխառությունների մարում տարվա ընթացքում (ոչ դրամային-շահաբաժնի հետ փոխմարման եղանակով) | (5,000) | (5,000) |
| **Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 20,000 | 20,000 |

## 11. Գործարքներ կապակցված կողմերի հետ

### 11.1 Գործարքներ

Հիմնադրամը ասոցիացված կազմակերպության հետ, ի հավելում շահաբաժինների և կանոնադրական կապիտալի փոփոխությունից առաջացած եկամտի (ծնթ. 6), նաև կատարել է ստորև նշված գործարքները.

| Կապակցված կողմ | Կապակցվածության բնույթը | Ծառայություններ 2023 հազար դրամ | Ծառայություններ 2022 հազար դրամ | Հումանիտար և ֆինանսական աջակցություն 2023 հազար դրամ | Հումանիտար և ֆինանսական աջակցություն 2022 հազար դրամ |
|---|---|---|---|---|---|
| Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ | ասոցիացված կազմակերպություն | 2,522 | 5,193 | 491,156 | 1,099,385 |
| | | **2,522** | **5,193** | **491,156** | **1,099,385** |

## 11.2 Մնացորդներ

Հաշվետու տարվա վերջին կապակցված կողմերի հետ առկա էին հետևյալ մնացորդները.

| Կապակցված կողմ | Կապակցվածության բնույթը | Դեբիտորական պարտքեր 2023 հազար դրամ | Դեբիտորական պարտքեր 2022 հազար դրամ |
|---|---|---|---|
| Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ | ասոցիացված կազմակերպություն | 25,001 | - |
| | | **25,001** | **-** |

| Կապակցված կողմ | Կապակցվածության բնույթը | Կրեդիտորական պարտքեր 2023 հազար դրամ | Կրեդիտորական պարտքեր 2022 հազար դրամ |
|---|---|---|---|
| Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ | ասոցիացված կազմակերպություն | 118 | 118 |
| | | **118** | **118** |

## 11.3 Փոխառություններ

Հաշվետու տարվա վերջին կապակցված կողմից ստացված փոխառության մասով առկա են հետևյալ մնացորդները.

| Կապակցված կողմ | Կապակցվածության բնույթը | 2023թ. հազար դրամ | 2022թ. հազար դրամ |
|---|---|---|---|
| Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ | ասոցիացված կազմակերպություն | 21,500 | 20,000 |
| | | **21,500** | **20,000** |

## 11.4 Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավասու են և պատասխանատվություն են կրում Հիմնադրամի գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար: Հիմնադրամի կառավարչական անձնակազմը կազմված է տնօրենից և Հոգաբարձուների խորհրդի անդամից:

| | 2023թ. հազար դրամ | 2022թ. հազար դրամ |
|---|---|---|
| Աշխատավարձ և այլ հատուցումներ | 8,532 | 8,444 |
| | **8,532** | **8,444** |

Կապակցված կողմերի հետ հաշվետու տարվա ընթացքում այլ գործարքներ չեն կատարվել:

## 12. Պայմանական պարտավորություններ

Հիմնադրամը ներգրավված չէ դատական վարույթներում:

## 13. Գրավադրված ակտիվներ

Հիմնադրամը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գրավադրված ակտիվներ չունի:



Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 05.08.2024 11:52